կան ուսանողներ տեսնել, որ նուիրված են լինում «իմ սիրելի երեխային», բայց եթէ նոյն այն երեխան աղաղակում է օրօրոցի մէջ կամ մրմնջում է անկիւնի մի մէջ իւր մօր անուշադրութեան պատճառով, որը լցնում է լրագիրը իւր շարադրութիւններով, խոստովանում ենք անկեղծօրէն — այս դէպքում աւելի լաւ կ՚լինէր, որ այն չափաբերական տողերը բնաւ չլինէին։

Ուրեմն մեր ժամանակի զգալի պակասութիւնը մայրերն են, որոնք բաւական հնարաւորութիւն և հաստատամտութիւն ունենային իւրանց կոչումն հասկանալու և կատարելու համար և աւելի ևս սէր ունենային կոչման դժուարութիւնները քաղցրացնելու համար։

Ի՞նչ կարող էր ուրեմն այս պակասութիւնը փոխարինել։ Հասարակական կարծիքը, որ ձայնակից է լինում բազմաթիւ առարկաներին, մի՞թէ այդ հանգամանքում անձայն կ՚մնայ և չի գտնի միջոց մեզ լաւ մայրեր հասցնելու»։

Ու ահա այսպէս է խօսում իւրանց կանանց մասին ամերիկական մանկավարժական լաւագոյն օրագիրներից մին։

Մ. Մ.

ԼՈՒՌ ՃԵՄԱՐԱՆ (ԱԿԱԴԵՄԻԱ).

Համադան քաղաքի մէջ (Պարսկաստանում) հռչակաւոր Ակադեմիա կար, որի մէջ առաջին արձանը յետագայ վերնագիր ունէր. «Ակադեմեաները պիտի մտածեն շատ, գրեն սակաւ և խօսեն կարելուն չափ աւելի սակաւ»։ Նա կոչվումէր Լուռ Ակադեմիա, և Պարսկաստանի մէջ ճշմարիտ ուսումնական մի չկար, որ չցանկար նորա անդամ լինել։ Դոկտոր Զէբ, գեղեցիկ գրքի մի հեղինակն, իմացաւ որ Լուռ Ակադեմիայի մէջ պարապորդ տեղ կար։ Նոյնժամայն նա ճանապարհ է ընկնում և Համադան հասնելուն պէս ներկայանալով այն դահլիճի դրան առաջ, որտեղ հաւաքված էին Ակադեմեաները, խնդրում է դռնապանից նախագահին յետագայ նամակը հասցնել. «Դոկտոր Զէբը խոնարհագոյն խնդրում է իւրան նշանակել պարապորդ տեղը Լուռ Ակադեմիայի մէջ»։ Դռնապանն յանձնարարութիւնը նոյնժամայն կատարեց։ Բայց դոկտորը և նորա նամակը չափազանց ուշ եկան. տեղը արդէն պարապած էր։

Ակադեմիան շատ ցաւեց այս հանգամանքի մասին։ Նա ակամայ ընդունած էր իւր աշխատակիցների թւում արքունական ծաղրախօսը, որի կենդանի և թեթև սրախօսութիւնը փողոցի մարդիկներ էր զարմացնում։ Ակադեմիան ստիպված էր մնում բացասել դոկտոր Զէբին, սիրուն և լի գլխով ուսումնականին, որ քաջապէս գիտէր մտրակահարել դատարկ շատախօսները։

Նախագահը, որին յանձնվեցաւ այս անախորժ տեղեկութիւնը դոկտորին յայտնել, չէր վստահանում գրեթէ, և չգիտէր ինչ անէր։ Փոքր ինչ մտածելուց յետոյ նա հրամայեց ջուր ածել մեծ գաւաթի մի մէջ, բայց այնպէս լաւ լցնել, որ մի աւելացած կաթիլից ջուրը թափվէր։ Յետոյ նշան արեց, որ խնդրատու կանդիդատը մտնէ։ Նա մտաւ այն հասարակ և համեստ կերպով, որը գրեթէ միշտ իսկական արժանաւորութեան յատկութիւն է։

Նախագահը վերկացաւ և առանց մի բառ ասելու տխուր դէմքով ցոյց տուեց նորան կատարելապէս լցված խորհրդաւոր գաւաթը: Դօկտորը սորանից իմացաւ, որ Ակադեմիայի մէջ այլ ևս տեղ չկար, բայց առանց վհատելու նա կամեցաւ իմացնել, որ նշանակված թւից աւաքոյ մի ակադէմեանը ոչինչ խանգարելու չէր այնտեղ: Նա նկատում է իւր ոտների տակ վարդի տերև, բարձրացնում է նորան և զգուշութեամբ դնում է ջրի մակերևոյթի վերա և այս կատարում է այնչափ արհեստաբար, որ գաւաթից ոչ մի կաթիլ չէ թափվում:

Բարձրաձայն ծափահարութիւններ ձայնակից եղան դօկտորի այս սրամիտ պատասխանին: Այս անգամ օրէնքը լուծվեցաւ, և դօկտոր Զէբ անդամ ընդունվեցաւ միաձայն: Նոյնժամայն բերին նորան մատեան, որի մէջ ընդունվողներն իւրանք պիտի ստորագրվէին:

Նա ստորագրեց իւր ազգանունը:

Մնում էր միայն քանի մի սովորական շնորհակալութեան խօսքեր ասել: Բայց արդարև Լռիկ ակադէմեան լինելով, դօկտոր Զէբը շնորհակալութիւն մատոյց առանց մի բառ արտասանելու: Թերթի լուսանցի վերա նա գրեց թւանշան հարիւր (100), — այսքան էին նորա նոր ընկերակիցներն, — յետոյ այս թւանշանի առաջ զէրօ աւելացնելով (0100) ներքև ստորագրեց. նոքա կամենալու չէին ոչ աւելի ոչ պակաս: Նախագահը համեստ դօկտորին նոյնպէս քաղաքավարի և խելացի կերպով պատասխանեց: Նա աւելացրեց հարիւր թւանշանի առաջ մէկ (1100), և ստորագրեց. նոքա կամենալու են տասն անգամ աւելի: Ս. Ստէփանէ:

ՀԱՅԵՐԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ ՊԱՐՍԻԿՆԵՐԻ ՀԵՏ ՀԻՆԳԵՐՈՐԴ ԴԱՐՈՒՄՆ.

Հայերի պատմական կեանքի նշանաւոր երևոյթներից մինն՝ է Վարդանեանց պատերազմը հինգերորդ դարում՝. Հինգերորդ դարը, սիրելի ընթերցող, վերաբերում է բարբարոսութեան ժամանակամիջոցին երբ Յոյն և Պարսիկ բռնաւոր պետութիւնները արհամարհելով մարդկային իրաւունքների հաւասարութեան վսեմ գաղափարը, անխնայ ճնշում էին իւրեանց ստորադրած ազգերը. սակայն և այնպէս, նա մի փառաւո՛ր դար հանդիսադրվում է իւր միւս լուսաւոր կողմերով: Քրիստոնէութիւնը հալածվում է այդ ժամանակամիջոցում՝ և այդ հալածման միջնորդութեամբ նա տարածելով իւր կենսատու ճառագայթները դէպ ի զանազան կողմեր, բարձրացնում է փառաւորապէս իւր յաղթող դրօշը — Փրկչական Խաչը Քրիստոսի, որ արդէն վաղ ժամանակից հետէ գրկած էին Հայերը. Հայերի պատմական կեանքը ցոյց է տալիս ակն յայտնի՝ որ նորանք հեռի մնալով աշխարհային բազմավրդով աղմուկներից, բազմատեսակ քաղաքական կեանքի խռովութիւններից, իւրեանց միակ մխիթարութիւնը փնտռած են եղել քրիստոսական հոգեկեցոյց վարդապետութիւնների և հոգւոյ անդորրութեան մէջ. Հանգցնում է իւր մէջ խղճմտանքի ձայնը մի բարբարոս տէրութիւն և զրկում է Հայերին իւրեանց հարազատ վաստակներից, ստացուածներից, և գոյքերից, սակայն դեռ Հայերը ոչինչ յուսահատութեան նշան չեն ցոյց տալի. Ինչի՞. որովհետև նորանք չէին կապուած աշխարհային ունայն և վաղանցիկ փառքերի և վայելչութիւնների հետ. որովհետև նորանց միակ յոյսը և նեցուկը՝ Քրիստոսի Եկեղեցին դեռ անկործան մնացած էր, դեռ ոչինչ վտանգի ենթարկուած չէր. Մի աստուածատուր ահռելի պատգամ հնչում էր միշտ նորանց ականջներում. ,,Ծառայք, հընազանդ լերուք տերանց և թագաւորաց ձերոց, որպէս Աստուծոյ,,: Այդ պատճառով Հայերը անխտիր ջերմեռանդութեամբ ծառայել են հնազանդութեամբ որ և իցէ տիրապետող իշխանութեան, եթէ վերջինս կամեցած չէր խախտել նո-